

Հարաւ-արեւմուտք, մօտ 200 մ Հարաւ-արեւմուտք, վանք տանող ճանապարհի ձախ կողմում, բլրի եւ պարսպափակ յուշարձանախմբերի միջնամասում ու բլրի եկեղեցու շուրջը, Ս. Կարապետ մատուռ-դամբարանի շուրջը:

Հաւուց Թառ վանքի պատմութեան, յուշարձանների եւ վիմագրութեան ուսումնասիրութիւնը սկզբնաւորուել է դեռեւս 18-րդ դարում: Վանքի պատմութեան լուսաբանմանը շուրջ վեց էջ է նուիրել Սիմէոն Երեւանցին¹: Այստեղ առաջին անգամ քննութեան առարկայ է դարձել Գրիգոր Մագիստրոսի 1013 թ. շինարարական արձանագրութեան ընդօրինակութիւնը: Երեւանցին մեծ տեղ է յատկացրել վանքապատկան կալուածքների բացայայտման խնդրին:

Առաւել ընդգրկուն ու խորագիտակ է մեծավաստակ Հ. Ղեւոնդ Ալիշանի անդրադարձը²: Նրա շարադրանքում ներկայացուած են նաեւ յուշարձանի որմերից ընդօրինակուած հինգ արձանագրութիւններ:

1907 թ. Ռուսաստանի կայսերական հնագիտական ընկերութեան արշաւախումբը, Սիսուեի գլխաւորութեամբ, ի թիւս շրջակայքի բազմաթիւ այլ յուշարձանների, ուսումնասիրում է նաեւ Հաւուց Թառը, չափազրում պահպանուած շինութիւններից մի քանիսը: Արշաւախմբի գործունէութեան կարեւոր ձեռքբերումն է դառնում մեծ թուով վիմագրերի հաւաքումն ու հրատարակումը (35)³:

Այսպիսի նշանաւոր վանական հաստատութիւնը եւ պատմաճարտարապետական հոյակերտ յուշարձանախումբն ակնկալում էր իր հմուտ հետազօտողին, որպիսին դարձաւ հայագիտութեան մեծ երախտաւոր Գարեգին Յովսէփեանը: Նա Ն. Մառի առաջարկով նախաձեռնում է

Ազատ գետի հովտում գտնուող մի շարք նշանաւոր վանքերի (Գեղարդ, Աղջոց Ս. Ստեփանոս, Հաւուց Թառ) ուսումնասիրութիւնը: Հաւուց Թառի դէպքում քննութեան բուն առարկան վանքում պահուող Ամենափրկիչ Սուրբ Նշանն էր: Այս աշխատանքի մասին Գ. Յովսէփեանը գրում է, որ այն «վանքի պատմութիւնը էլ իւր ամբողջութեան մէջ, այլ Հաւուց Թառի Ամենափրկիչ կոչուած փայտակերտ Սրբութեան եւ նոյնանուն քարէ յուշարձանների կամ խաչքարերի հնագիտական-գեղարուեստական ուսումնասիրութիւն: Վանքի պատմութիւնը միայն մի օժանդակ լուսաբանութիւն է բուն խնդրի շրջանակի մէջ...»⁴: Ինչպէս վանքի, այնպէս էլ Ամենափրկիչ Սուրբ Նշանի պատմութեան շարադրման համար անհրաժեշտ էր տեղի վիմագիր նիւթի հաւաքումն ու քննութիւնը, ինչը յատուկ մատնանշել էր Ն. Մառը: Մեծ ուսուցչապետի յորդորն էր, «Գեղարդի եւ Աղջոց Ս. Ստեփանոս վանքերի, ինչպէս եւ Հաւուց Թառի արձանագրութիւնների կարգաւորեալ հաւաքումն ու վերստուգութիւնները...»⁵. Մեզ անյայտ է, թէ Գ. Յովսէփեանը ինչ ընդգրկմամբ է հաւաքել Հաւուց Թառի արձանագրութիւնները, արդեօ՞ք միայն այն 39 վիմագրերը, որոնք գետեղուած են նշուած աշխատութիւնում: Վերջինս ընթերցելիս թուում է, թէ հեղինակը մտադրութիւն էր ունեցել հաւաքել յուշարձանախմբի բոլոր վիմագրերը, յամենայն դէպս՝ հրատարակել: Այս եզրայանգման վկայութիւնն են մի շարք արձանագրութիւնների բացակայութիւնը, որոնք նա ուղղակի էր կարող չնկատել. մի քանիսի մասին միայն յիշատակել է, առկայ չեն Սիսուեի արշաւախմբի հրատարակած 10 վիմագրերը:

Ի մօտոյ զբաղուելով վանքի պատմութեան, արձանագրութիւնների հաւաք-

ման ու քննութեան խնդիրներով՝ տեղում մեզ յաջողուեց յայտնաբերել ու վերծանել 40-ից աւելի ամբողջական եւ բեկորային վիմագրեր, նախկին հրատարակուածներում կատարել որոշ ճշգրտումներ ու լրացումներ:

Ստորեւ ներկայացնում ենք մի շարք նոր եւ նորովի վերծանուած ու մեկնուած արձանագրութիւններ, որոնք որոշակի արժէք ու հետաքրքրութիւն են պարունակում վանքի պատմութեան ուսումնասիրման համար:

1. Բլրի եկեղեցի, ամ պատին, արտաքուստ, պատուհանի հս կողմում, 5 տող ՅՆՈՐԱԻՔՆ ԱՅ, ԵՍ ՄԻՍԻԹԱՐՔԱՀԱՆԱՅ ՎԱՐԴԱՊԵՏ, ՀՐԱՄԱՆԱԻՏՐ / ԳՐԻԳՈՐԻՍ, ՍԱԼԵՑԻ ԶԵԿԵՂԵՏԻՍ ԵԻ ԷՏՈՒ ԱՅԼ ԱՐԴԻԻՆՔ: Ա: ԱԻԹԱՄ ԱՌՆԵՆ ԻՆՁ ԵԻ ԾՆՈՂԱՅ ԻՄՈՑ.

Ծանօթ. Այս վկայագիրը Գ. Յովսէփեանին ծանօթ է՝: Նա, իրաւամբ, Միւթար քահանային համարում է «քարգործ, ճարտարապետ»: Չնայած վիմագրում խօսուում է միայն եկեղեցին սալագրում խօսուում է միայն եկեղեցին սալեղած լինի կառոյցի շինարար-ճարտարապետը: Ըստ այդմ էլ եկեղեցու շինարարութեան թուագրմամբ կարելի է որոշել արձանագրութեան փորագրման մօտաւոր ժամանակը: Գ. Յովսէփեանը, նկատի ունենալով եկեղեցու շարուածքը, մուտքի եւ պատուհանների շրջանակների երկրաչափական հիւսուածքազարդը, եկեղեցին հարազատ է համարում 13-րդ դարին, սիրութիւնն էլ ցոյց է տալիս, որ շէնքը ԺԳ դարի առաջին կիսի գործ պիտի լինի»⁷:

Մատենագրական եւ վիմագրական մի շարք վկայութիւններ հնար են տալիս

այս թուագրումը առաւել որոշակիացնել՝ 12-րդ դարի 90-ական-13-րդ դարի 20-ական թուականները: Անշուշտ, միայն սալեղու հանգամանքը բաւարար է վիմագրերը շինարարութեանը ժամանակակից համարելու համար, քանի որ բազմաթիւ վկայագրեր (սալեղու մասին) ցոյց են տալիս, որ սալաշատակումը կարող էր կատարուել նաեւ աւելի ուշ եւ յաճախ այդ իրողութիւնն ուղեկցուում էր «որ ի բնէ» կամ «ի սկզբանէ էջը սալուած» արտայայտութիւններով: Միւթար քահանան եկեղեցին սալել է տէր Գրիգորիսի հրամանով: Դատելով արտայայտման ձեւից՝ թուում է թէ այստեղ յիշուած է վանքի առաջնորդը: Գ. Յովսէփեանը մէջբերում է մի հատուած 1190 թ. Այրիվանքում ընդօրինակուած Տօնապատճառի յիշատակարանից: Գրիչը յայտնում է, որ ձեռագիրը 1200 թ. «հրամանաւ տն Գրիգորիսի՝ սպասաւորի սբ. Նշանի» նուիրուել է «յԱծընկալ սբ. Նշին»⁸: Գ. Յովսէփեանը կարծում է, որ «սբ. Նշան»-ը կամ «յԱծընկալ սբ. Նշան»-ը Հաւուց Թառի փայտակերտ սրբութիւնն է⁹, ըստ այդմ էլ, հաւանաբար, Տօնապատճառը նուիրուել է Հաւուց Թառ վանքին: Այս կարծիքից հետեւում է, որ Գրիգորիսը Հաւուց Թառ վանքի առաջնորդն էր եւ Հաւուց Թառի վանքի 1177 եւ 1181 թթ. էջը կարող Գեղարդի վիմագրերում յիշուած Գրիգոր առաջնորդը լինել: Սոյն պարագայում երկու թիւնքն «Աստուածընկալ» անունով, այլ վանքին ձեռագիր նուիրելու համար, թեւեւ անհրաժեշտ էր նուիրատու վանքի առաջնորդի հրամանը:

2. Բլրի եկեղեցի, հւ-հա աւանդատան մուտքի վերեւում, պահպանուած 4 տող. ԿԱՄԱԻ ԱՄԷՆԱԿԱԼԻՆ ԱՅ, ԵՍ

Ղազար Ածատուր տէր Աւագս բէրաք զընուրս եւ կանկն/ է ցաք զխաչս եւ տնկէցաք զայգին զոր ամիրսպասալար եւ աթապակ Սադուն նուվէր (s!) ետ էկեղեցոյ գ ի թվ 21-ր (1287)»¹⁷:

Վկայագրում «տեղոյս» տէր է Հուշակուած պարոն Աշոտը, որն, ամենայն հաւանականութեամբ, Վասակ Խաղբակեանի (1270) որդին էր, Գրիգոր Խաղբակեանի (-1222) թոռը: Վարկածի էութիւնն այն է, որ Հաւուց Թառի տէր Պահլաւունիների հարեւան Խաղբակեան իշխանական տան ներկայացուցիչը կարող էր այստեղ շինարարութիւն եւ նուիրատուութիւն կատարել: Ըստ այսմ՝ մեր արձանագրութեան պակասող սկզբնահատուածում նշելի է Վասակ Խաղբակեան անունը, իսկ ժամանակը՝ 13-րդ դարի 70-ական թթ.:

Որոշակի հետաքրքրութիւն է ներկայացնում ենթադրեալ Վասակ Խաղբակեանի նուիրատուութեան օբյեկտի խնդիրը: ԽԱՉ ԵՒ ԱՅԳԻ բառակապակցութիւնը կարելի է վերծանել նաեւ ԽԱՉԵԱՅԳԻ որպէս տեղավայրի անուանում, քանի որ Ե տառի աջ կարճ ստեղծի վրայ Ի-ի կցադրումը կասկածելի է: Յաջորդ՝ ՅԱԿԻՆ կամ ՅԱԿԻՆՆ բառը, թերեւս ԱԿ / աղբիւրի, ջրի կամ ջրաղացի/ արմատից կազմուած տեղանուն է: Երկրորդ տողում փոքր-ինչ անորոշ է ԾԱՂԿՈՅՆ ԼԱՆՋՈՎՆ բառակապակցութիւնը: Լանջի առկայութիւնը ենթադրում է Ծաղկոցն սար կամ սարահարթ տեղանունը:

7 Գաւթի սեան վրայ, ներկայումս ընկած է կիսաշէն եկեղեցու հս-ամ կողմում, 11 տող.

ՕՆՈՐՀԻԻՆ ԱՅ, ԵՍ ՄԼՔ/ԱՆ ԽԱԹՈՒՆ ԿԵՆԱԿԻՅ ԱԻԱԳ ՊԱՐՈՆԻ, ԵՏՈՒ ԶԻՄ ԱՅԳԻՆ, ՈՐ Ի ՏԱՆ/ԾՈՒԱԶ ԳՆԵԼ ԷԻ Ի/: ՌԵԾ: / 1500/, ՍՊ, :Օ: / 500/ ՍՊ: ԱՅԼ ԵԻ / ԱՅԼ ԱՐԴԻԻՆՔ ԵԻ ՄԻԱ-

ԲԱՆՔ/Ս Ի ՏԱՐԻՆ ՄԵՁ :Բ: ԱԻՐ ՊԱՏԱՐԱԳ ԳՐԷՑԻՆ, ՈՐ ԱՆԽ/ԱՓԱՆ ԼԻՆԻ, ԿԱՏԱՐԻՉՔ / ԱԻՐՀՆԻՆ Ի ՏԷ: ԱՄԷՆ:

Ծանօթ. Նուիրատու Մլքան խաթունը եւ նրա կողակիցը այլ յիշատակութիւններ չունեն: Դատելով «խաթուն» եւ «պարոն» յորջորջումներից ու նուիրուած այգու եւ այլեւայլ ունեցուածքի արժէչափերից, նրանք, թերեւս, Պահլաւունեաց կամ այլ իշխանական տան ներկայացուցիչներ են: Արձանագրութիւնը, սակայն, կարեւորում է Տանձուաջ տեղանունն առկայութեամբ: Բլրի եկեղեցու հիւսիսային պատի մի վիմագրում Գերք եւ Շաքար ամուսինները 1000 սպիտակով գնել են Տանձուաջում գտնուող Շիկի նորատունկ այգին եւ նուիրել վանքին: Այս նուիրագիրը քանիցս հրատարակուել է, սակայն նուիրատուութեան հատուածը տարակարծութիւնների տեղիք է տուել: Վկայագրի առաջին հրատարակիչը՝ Մանկունին, այն վերծանել է. «գնեցաք զՏանձուաջ Զոշիկին որ քնի Ռ սպ»¹⁸: Հ. Ղ. Ալիշանը կարդացել է. «զՏանձուաջ Զոշիկին Ռ սպիտակի»¹⁹: Արձանագրութեանն անդրադարձել է Թ. Աւդալբեկեանը եւ սոյն հատուածը վերծանել. «գնեցաք գտանձուտն, Զոշիկի նորքն ի Ռ սպիտակի»²⁰: Փոքր-ինչ այլ կերպ է կարդում. «զՏանձուտն /կարելի է վերջին վանկը Ան կամ նԱ կարդահ - Գ. Հ. / Զաշիկի նորքն ի :ռ: սպ»²¹:

Իր վիմագրագիտական բառաքննութիւններում Ս. Աւագեանը ճիշտ բառանշատման շնորհիւ ներկայացնում է խնդրոյ առարկայ հատուածի հաւաստի վերծանութիւնը. «գնեցաք զՏանձուաջո Շիկի նորքն ի :Ռ: սպիտակ»²² եւ մեկնաբանում. «Այսինքն Գերք եւ Շաքար նուիրատուները հազար սպիտակ դահեկանով գնել եւ Հաւուց Թառի վանքին

են նուիրել Տանձուաջ (Տանձուաջ) դաշտամասում գտնուող Շիկի նորքը (այգի նորատունկ)²³»: Նորայայտ արձանագրութեամբ հաստատուում է տեղանունն՝ Ս. Աւագեանի վերծանութիւնը:

Կարծում ենք, որ նորայայտ արձանագրութիւնը ժամանակամերձ է նախորդին:

8 Գաւթի սեան վրայ, ներկայումս ընկած է կիսաշէն եկեղեցու հս-ամ կողմում, նախորդի կողքին, 8 տող.

ԿԱՄԱԻՆ ԱՅ, ԵՍ ԵՂԻԱ ԱԻՂԱՍԵՆՑ Է/ՏՈՒ ԱՐԴԻԻՆՍ Ի ՍԲ ՈՒՆՍՍ ԶՎԱՐԴԵ/ՆՑ ԵԻ ԶԱԻԶԿԵՆՑ ՀՈՂԵՐՈՅՆ Զ/ԻՄ ԲԱԺԻՆՆ ԵԻ :Ա: ՎԵՑԿԻ :Զ: ԵԶՆ ԵԻ :Ճ: ԴՀ: ԵԻ ԵՂԱՍԻՐՔՍ ԽՈՍՏԱՅԱՆ ՅԱՄԷՆ / ԱՄԻ :Զ: ՊԱՏԱՐԱԳ, ԹԷ ՈՒՔ ՄԻ ԶԱՅՍ ՀՈՂ/ԵՐՍ ՅԱՅՍ ԷԿԵՂԵՑՈՅՍ ՀԱՆԵԼ Զ/ԱՆԱ ԴԱՏԻ ՅԱՅ, ԿԱՏԱՐԻՉՔՆ ԱԻՐՀՆԻ / ՏԷ:

Ծանօթ. Վիմագրում յիշուած են երեք ընտանիքներ՝ Աւդասենց, Վարդենց եւ Աւճկենց, որոնք համատեղ տնօրինել են անշարժ ու շարժական գոյքի, իւրաքանչիւրն իր բաժնեմասով: Աւդասենց Եղիան Հաւուց Թառին նուիրել է ընդհանուր ունեցուածքի իր բաժնեմասից հողակտոր, մէկ վեցկի վեց եզներով ու 50 դահեկան: Վարդենց եւ Աւճկենց ընտանիքները յիշատակում են նաեւ բլրի եկեղեցու հիւսիսային պատին փորագրուած Ստեփանոս Յոհաննեսի նուիրագրում²⁴: Արձանագրութիւնը դիւրութեամբ վերծանում է, կասկածելի է թւում վեցերորդ տողում, ԹԷ ՈՒՔ բառերից յետոյ փորագրուած կցագիրը, որը կարելի է բացել ԱՄԻ, ՄԻԱ, ԻՄԱ, ՄԻ, ԻՄ:

Կարծում ենք, որ իմաստային առումով աւելի ճիշտ է կցագիրը կարդալ ՄԻ: Այս արձանագրութեան աղաւաղուած ու

թերի վերծանութիւնը գետեղուած է MAK-ում /էջ 46/:

9 Գաւթի. ներքուստ, ընկած խոյակի նիստին, զոյգ խաչաքանդակների երկու կողմում, 3 տող.

ԽԱՉՍ ՅԱԿՈՐԱ Է ԵԻ ՄՄՅՐՏԻԿՆԱ, ՅԱՂԱԻԹ/Ս ՅԻԾԵՑԷՔ:

Ծանօթ. Թուագրուում է 13-րդ դարով:

10 Գաւթի. ներքուստ, ընկած սեան վրայ, խաչաքանդակների վերեւում, 1 տող.

ՍԲ ԽԱՉՍ ԲԱՐԷՆԱԻՍ ՏՐ ԶԱՔԱՐԷԻՆ ԵԻ ՏՐ ՀԱՄԱԶԱՍՊԻՆ:

Ծանօթ. Կարծում ենք, որ այստեղ յիշատակուած են վանքի երկու առաջնորդները: Մատենագրական աղբիւրներում, որպէս Հաւուց Թառի առաջնորդ, Զաքարէ կամ Զաքարիա անունով վկայուած են երկու անձինք: Մէկը «տէր Զաքարէն Հաւուց Թառայ ի յազատորդեաց»²⁵, որը Գրիգոր Արտագեցու, Յովհաննէս Կոլոտիկ Հերմոնացու հետ ակտիւ մասնակցութիւն է ունեցել 1441 թ. կաթողիկոսական ընտրութիւններին, մասնաւորապէս «նորընտիր կաթողիկոսին գահընկէց անելու գործում, 1441-1443 թթ.²⁶: Զաքարիայի «ի յազատորդեաց» յորջորջումը աներկբայորէն վկայում է նրա ազնուականական ծագման մասին, ինչը հիմնաւորում է Սիմէոն Երեւանցին: Խօսելով Գրիգոր Մագիստրոսի կողմից վանքը նորոգելու, այն «հողովք եւ ջրովք» հարստացնելու եւ իր որդի Վահրամին առաջնորդ կարգելու մասին՝ նա շարունակում է. «վասն որոյ եւ յայնմ հետէ որպէս թէ գհայրենի մուլք արարեալ զսա որդիք եւ թոռունք եւ յետագայ ազատուածք սորին, մի զկնի միոյ յաջորդեցին զԱռաջնորդութիւնն սորին ոչ միայն ի յիշխանութեանն Հայոց, այլ

եւ ի ժամանակս թագաւորացն Պարսից մինչեւ գրէ թէ ի ժամանակս մեր...»²⁷:

Չաքարիա եպիսկոպոսի եւ նրա տոհմական պատկանելութեան մասին Երեւանցին աւելացնում է, «սոքա ի բնէ անտի ազատագրուէք էին եւ անուանիք, շատագգ եւ հարուստք, յորոց թէպէտ ոմանք վանականք լինէին, ոմանք աշխարհականք, սակայն մի էին տամբք եւ ընչիւք եւ իւրեանց էր Տամարեցեալ գհօղն եւ վանքն առանց խտրութեան...»²⁸: Կարծում ենք, որ Սիմէոն Երեւանցու սոյն եզրայանգումների համար հիմնական աղբիւր է ծառայել իր իսկ կողմից մէջբերուած 1013 թ. Գրիգոր Մագիստրոսի արձանագրութեան ընդօրինակութիւնը: Այս նոյն աղբիւրը հնար է տուել Գ. Յովսէփեանին եզրայանգելու, որ Հաւուց Թառի առաջնորդները սերում էին Պաշլաւունեաց տոհմից²⁹: Չաքարիան որպէս վանքի առաջնորդ յիշատակուած է դեռեւս 1413 թ.: Այդ թուին ընդօրինակուած մի «Մաշտոց» ժողովածուի յիշատակարանում կարդում ենք. «ի վերադիտողութեան սուրբ ուխտիս Հաւուց Թառ, հեղահոգի եւ սրբասէր եւ մաքրամիտ եւ մեծ ազգի արհիպատիւ եպիսկոպոսի տէր Չաքարիայ»³⁰:

Մատենադարանում պահուող պարսկերէն կալուածագրերից մէկը վերնագրուած է. «Չաքարիա վարդապետի ժառանգական կալուածներ հանդիսացող Մանկուս, Աւանիկ, Կուղիս, Կրզըլվանք, Կոխը, Դունիս, Սուրբ Սարգիս գիւղերի եւ Կուտուց-վանքի ու Աւանասարի ագարակների նկատմամբ Բէյթ-ուլ-մալի կողմից ոչ մի առարկութիւն չլինելու վերաբերեալ 1489 թ. կազմած արձանագրութիւնը»³¹: Վաւերագրի հրատարակիչը նշում է, որ այն «հաշտութեան գիր կամ համաձայնագիր («մուսալիհէ») է եւ իր շարադրութեան ձեւով տարբերում է

գնման («մուբայիհէ») կամ նուիրման («վակֆ») ակտերին վերաբերող արձանագրութիւններից («ղաբալէ») եւ «վակֆնամէ»³²: Սիմէոն Երեւանցին, «սխալ հասկանալով վաւերագրի բովանդակութիւնը»³³, այն համարել է «ղապալայ», այսինքն Չաքարիան 5000 դինարով գնել է նշուած կալուածները³⁴: Իրականում, այս փաստաթուղթը, ինչպէս մատնանշուած է հէնց վերնագրում, յիշուած կալուածները որպէս Չաքարիա վարդապետի ժառանգական սեփականութիւն ճանաչման կամ վերահաստատման մասին է: Վաւերագրում որոշակի ասուած է, որ «արձանագրուեց, պարզուեց եւ հաստատուեց բարձր դատարանում, որ Ջհանշահի որդի, Շահինի որդի Չաքարիա անունով (հայ) կրօնաւորը տիրում է «... ի ներքոյ թուարկուած եւ մանրամասն սահմաններով նկարագրուած բոլոր գիւղերին եւ ագարակներին»³⁵: Կալուածագրի ստեղծման շարժառիթների կապակցութեամբ Յ. Փափագեանը գրում է. «... յատկապէս Աղ-Կոյունլու Եաղուբ Փաղիշահի օրօք (1478-1490 թթ.) բուռն հալածանքներ են սկսուած Տայ աչքի ընկնող ունեւոր անուանի մարդկանց նկատմամբ...»: Այս հետապնդումների ժամանակ էր ահա, որ բռնագրաւում եւ որպէս «հակառակորդների ստացուածքներ» «Բէյթ-ուլ-մալի» սեփականութիւններ էին յայտարարուած հաւատափոխութեան առաջադրանքը չընդունողի հայ «ազատորդիների կալուածները»³⁶: «Սակայն ...Չաքարիա վարդապետը կարողացել է ապացուցել իր սեփականատիրական իրաւունքները այդ կալուածների նկատմամբ եւ վճարելով 5000 դինար որպէս հաշտութեան գին (մուսալիհէ), ետ է ստացել դրանք»³⁷: Կալուածագրում այդպէս էլ գրուած է, որ, երբ Բէյթ-ուլ-մալի լիազօր Քամալ-էդդին Աբդին բեկը յայտարարում է, «որ

նա այլեւս ոչ մի դէպքում եւ ոչ մի պատճառով որեւէ իրաւունք եւ վէճ չունի դրանց (նշուած կալուածների - Գ. Ս.) նկատմամբ», Չաքարիայից «որպէս հաշտութեան գումար նա ստացաւ Թաւրիզում հատուած հինգ հազար ընթացիկ հնչուս սպիտակ արծաթ դինար»³⁸:

Նոյն Չաքարիա վարդապետի անուն հետ է կապուած մէկ այլ կալուածագիր, ըստ որի նա Խաչատուրի որդի Աստուածատուրի որդուց 2000 արծաթ դինարով գնում է «Գառնի գիւղի մի ամբողջ այգի, նոյն այգում գտնուող մի հնձանի հետ միասին»³⁹: Ելնելով այն հանգամանքից, որ այս փաստը հետագայ վաւերագրերում, «Ջամբու»-ում վկայուած է՝ Յ. Փափագեանը եզրակացնում է, որ այգին եւ հնձանը մնացել են Չաքարիայի անձնական սեփականութիւնը, չեն նուիրել ո՛չ վանքին, ո՛չ այլոց⁴⁰: Այս առումախի պայմանագիրը կնքուել է 1525 թ. նոյեմբերի 23-ին⁴¹:

Չաքարիա վարդապետը յիշատակուած է եւս մի կալուածագրում. «Չաքարիա եւ Համագասպ վարդապետների կողմից Հաւուց Թառի Ս. Ամենափրկիչ վանքին վակֆ արուած Կրզըլ վանք, Մանկուս, Աւանիկ գիւղերի եւ Քեղուարդի ու Սուրբ Սարգիս ագարակների կէս մասի. 1526 թ.»⁴²:

Վաւերագրում Չաքարիան եւ Համագասպը համարում են «քրիստոնեայ Շահինի որդիներ», այսինքն նրանք հարազատ եղբայրներ են: Գ. Յովսէփեանը երկուսին էլ կոչում է վանքի առաջնորդ⁴³: Կարծում ենք, որ առաջնորդ եղել է Չաքարիան, իսկ երկուսը միասին յիշուած են որպէս իշխանական տան ներկայացուցիչ-կալուածատէրեր, որոնք իրենց անշարժ ունեցուածքի մի մասը նուիրել են վանքին՝ բռնագրաւումից եւ հարկահանութիւնից ապահովելու համար:

1526 թ. կալուածագիրը, որտեղ միասին յիշատակուած են Չաքարիա եւ Համագասպ Պահլաւունի եղբայրները, հնար է տալիս պնդելու, որ Հաւուց Թառի վերաբերեալ կարճատեւ վիճաբանում նշուած են այս նոյն անձինք:

ՏԱՊԱՆԱՔԱՐԵՐ

11. Ուղղանկիւն սալաձեւ տապանաքար, կիսաշէն եկեղեցու հս կողմում, 4 տող.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ / ՄՈՎՍԷՍ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ: ՌԺՁԳ (1704) / ԹՎԻՆ:

Ծանօթ. Հանգուցեալը, ամենայն հաւանականութեամբ, վանքի առաջնորդն է եղել՝ այդ աթոռին փոխարինելով Մարկոս վարդապետ Ջուղայեցուն: Համաձայն Չաքարիա Քանաքեռցու հաղորդման՝ վերջինս առաջնորդել է Յակոբ Դ Ջուղայեցի հայոց կաթողիկոսի (1655-1691) հովուապետութեան վերջին տարիներից⁴⁴, քանի որ 1673 թ. վանքի առաջնորդ է յիշուած Մատթէոս վարդապետ Ջուղայեցին:

12 Ուղղանկիւն սալաձեւ տապանաքար, կիսաշէն եկեղեցու հս կողմում, 3 տող.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ / ՄԱՂԱՔԻԱՅ ՎԱՐ / ԴԱՊԵՏԻՆ:

Ծանօթ. Հաւուց Թառ վանքի առաջնորդ Մաղաքիա վարդապետին յիշատակում է Սիմէոն Երեւանցին. «գի սոյն գեօղս (հաւանաբար Հաւուց Թառ գիւղը - Գ. Ս.), սոյն գեօղացի Տէր Անդրեասն ծախէ սոյն վանից (Հաւուց Թառ - Գ. Ս.) առաջնորդ Մաղաքիա վարդապետին 1/30/ սօմարէն տեղ հող մի՝ մէկ թումանի, ի ՌԺՄԷ թուին տաճկաց»⁴⁵:

Նոյն տեղում Մաղաքիա վարդապետը վկայուած եւս երկու գործարքների առիթով. «Դարձեալ ունի սոյն վանքս ի յերեւան քաղաքն զձեռք մի տուն իւր

բաղձալուսն, զոր սորին Առաջնորդ Մաղաքիա վարդապետն առնու ի Գասպարի որդի Բաբելջանէն՝ յիսուն ղուռուշի, ի ՌՃԼԹ թուին տաճկաց»⁴⁶: «Դարձեալ ունի ի Նորագեղ զայգի մի վեց տախտակ՝ որ չորս տախտակն ի վաղուց հետէ վախճմ եմ տուեալ, եւ զերկուս տախտակն նորին Առաջնորդ Մաղաքիա վարդապետն առնու ի Սուլէյմանբէկ տաճկէն, քսան ղուռուշի ի ՌՃԼԹ թուին տաճկաց»⁴⁷: Մաղաքիային հանդիպում ենք նաեւ 1713 թ. Հաւուց Թառում նորոգուած մի Յայտաւուրքի յիշատակարանում. «մեր հոգեւոր Հայրն Մաղաքիայ ածաբան վրդապետն յառաջնորդ սբ Ամենափրկչի»⁴⁸: Գ. Յովսէփեանը մատնանշում է, որ Մաղաքիայի առաջնորդութեան ժամանակ՝ 1721 թ., Աստուածատուր Համադանցի կաթողիկոսը նախաձեռնում է նոր եկեղեցու կառուցումը, ինչը կիսատ է մնում լեզգիների արշաւանքի պատճառով⁴⁹:

13 Երկլանջ տապանաքար, Բլրի եկեղեցու հս-աե կողմում, մի նիստին, 1 տող.

ՌԱՍՏԱԿԷՍ

Ծանօթ. Վանքի պատմութեան սկզբնաղբերներում Ռստակէս կամ Արիստակէս անունը մէկ անգամ հանդիպում է: 1464 թ. Ստեփանոս արեղայի ընդօրինակած ձեռագրի յիշատակարանում, ի թիւս Հաւուց Թառի վանական միաբանութեան այլ անդամների յիշուած է նաեւ Ռստակէս անունը⁵⁰:

14 Ուղղանկիւն սալաձեւ տապանաքար, Բլրի եկեղեցու ամ կողմում, 2 տող. ԱՐԱՆ / ԱՄ:

Ծանօթ. Բլրի եկեղեցու մուտքի աջ կողմում՝ պատին կցուած խաչքարի պատուանդանին փորագրուած արձանագրութեան մէջ, վկայուած է, որ էնոք

քահանան խաչքարը կանգնեցրել է ի բարեխօսութիւն իրեն, ծնողներին եւ ԱԲՐԱՀԱՄՈՒ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ԻՄՈՒՍ⁵¹: Արտայայտման ձեւը ցոյց է տալիս, որ Աբրահամը եղել է էնոքի ուսուցիչը: Այս իրողութիւնը հաստատուում է մէկ այլ՝ մատենագիր վկայութեամբ: 1297 թ. Հաւուց Թառում ընդօրինակուած ձեռագրի յիշատակարանում Գրիգոր գրիչը աղաչում է յիշել «ի Քրիստոս ... զԱբրահամ ուսուցիչ իմ...»⁵²: Մէկ այլ Աբրահամ, որպէս վանքի միաբան, վկայուած է 1464 թ. ընդօրինակուած Ճաշոցի յիշատակարանում⁵³: Եւ տապանաքարի յարդարանքը, եւ վիմագրի տառաձեւերը հնար են տալիս կարծելու, որ այդ գերեզմանում թաղուած է էնոք քահանայի եւ Գրիգոր գրչի ուսուցիչ Աբրահամ վարդապետը:

15 Ուղղանկիւն սալաձեւ տապանաքար, նախորդի մօտ, 3 տող.

ԱԲԷՆԵՐ / ՎԱՐԴԱՊ / ԵՏ

Ծանօթ. Վիմագրի տառաձեւերը հարազատ են 13-14-րդ դարերին: Ինչպէս անձնանունը, այնպէս էլ հանգուցեալը այլ յիշատակութիւններ չունեն: Թերեւս վանքի ուսուցչապետներից է եղել:

16 Երկլանջ տապանաքար. մէջտեղից կտրուած, ընկած է գաւթի ամ կողմում, իւրաքանչիւր լանջին 3 տող.

Ի թՈՒԻՍ :ՉԼԴ: /1285/ ԿԱՆԳՆԵՑԱԻ ՍԱ ԽԱՉՍ Ի ԲԱՐԵԽԱԻՍՈՒԹԻ / ԻՆԾ՝ ՄԱՄՏԻԿԵԱ, ՈՐ ԱՆԺԱՄ ՓՈԽԵՑԱԻ Ի ՔՍ ՅԱՄԻ :ԺԱ: / ՈՐ ՄԵԾԱՐԷՔ ԵՂԵԻ ԾՆՈՂԱՅՆ ՈՍՆԻՆ ԵԻ ՄԱՄԱՏԻՆ / ԵԻ ԿԵՆԱԿՑԻ ԻԻՐՈՑ ... ՅԻ / ԾԷՑԷՔ Ի ՔՍ ԵԻ ՅԻԾՈՂՔՏ ԱԻՐԸՆԻՔ ՅԱԻՏԵԱՆ / Ի ՔԷ ԱՅ ՄԵՐՈՑ ... ԵԻ Ի ՀԱՆԴԵՐՁԵԱԼՆ ԱՄԷՆ:

Ծանօթ. Արձանագրութիւնը բաւական վատ է պահպանուել: Որոշ եղծուած հատուածները վերծանուած ու վերա-

կանգնուած են պայմանականօրէն: Կասկածելի է թուականի տասնաւորը: Տապանագրում նշուած անձինք այլ յիշատակութիւններ չունեն: Քարը, հաւանաբար, տեղահան է արուած պարսպապատ տարածքի գերեզմանոցից:

ԼՐԱՑՈՒՍԵՐ ԵՒ ՃՇԳՐՏՈՒՍԵՐ

17 Գաւթի խոյակներից մէկի երկու նիստերին, կիսաշէն եկեղեցու ամ կողմում, 4 տող.

ԾՆՈՐՀԻՆ ԱՅ, ԵՍ ՏԻԿԵԱՅՏԻԿԻՆ ԵՒ ՀԱՅՐ ԵՒ ՄԱՅՐ ԻՄ ՍԱՐԳԻՍ ԵՒ ԱՄԷՆՏԻԿԻՆ ՄԻԱԲԱՆՔ ՍԲ ՈՒԽՏԻՍ ԾԱՌԱՅԷՑԱՔ ՋՄԻԱԲԱՆՔՍ Ի / ՄԵՐ ԱՐԴԵԱՆՅ ԵՒ ՍՊԱՍԱԻՈՐԻՔ ՍՐԲՈՑՍ ՍԱՀՄԱՆԵՑԻՆ Ի Տ/ԱՐԻՆ :Գ: ԱԻՐ ԺԱՄ :Ա: ԻՆՁ :Բ: ԻՄ ՀԱԻՐ ԵՒ ՄԱԻՐԵ:

Ծանօթ. Գ. Յովսէփեանը նկատել է վերծանել է խոյակի մի նիստին փորագրուած հատուածը՝ գտնելով, որ «Արձանագրութեան մասերը կորած են կամ փլատակների տակ թաղուած»⁵⁴: Մեր վերծանութեան մէջ նիստերը առանձնացուած են ուղղահայեաց գծիկով: Կեչառիսի վանքի Ա. Նշան եկեղեցու մի վիմագրում կարդում ենք. ԿԱՄԱԻՆ ԱՅ, ԵՍ ՄԻԽԹԱՐԻՉ, ՈՐԴԻ ԳՐԻԳՈՐԻ ԵՏՈՒ ՋԻՄ ԱԽԲԻՆ ԱՅԳԻՆ ՅԵՐԵԻԱՆ Ի ՍԲ ՈՒԽՏՍ ԿԵՉԱՌՈՒՍ ՀՐԱՄԱՆԱԻ ՏԵ ԳՐԻԳՈՐԻՍԻ ԵՒ ԳՐԻԳՈՐ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ԵՒ ՅԱՌԱՋԵՆՈՐԴՈՒԹԻ ՀԱՄԱՋԱՍՊԱ ԳՐԷՑԱԻ ԺԱՄ :Ե: ԻՆՁ՝ ՄԻԽԹԱՐԻՉ :Գ: ՏԻԿԵԱՅՏԻԿԵԱ ԿՈՒԿՈՐԻՆ ՄԱԻՐԵ :Դ: ԳՐԻԳՈՐՈ :Գ: ՄԱՄԿԱ. ՀԱՍՏԱՏ Է ԳԻՐՍ ԿԱՄԱԻՆ / ԱՅ: ՈՎ ԽԱՓԱՆԷ ՄԵՐ ՄԵՂԱՅ ՏԷՐ ԱՌԱՋԻ ՔԻՍ՝ Գ. Յովսէփեանը գտնում է, որ «Գրիգորն ու Մամիկը... նուիրատուի ծնողներն են, տիկնաց տիկնան՝ կինը եւ Կուկորը՝ որդին»⁵⁶: Չնայած արձա-

նագրութեան մէջ բացայայտուած չեն նշուած անձանց հարազատական յարաբերութիւնները, այդուամենայնիւ, Գ. Յովսէփեանի նկատառումները հաւանական ենք դիտում: Կեչառիսի արձանագրութեան թուագրումը Գ. Յովսէփեանը պայմանաւորում է տէր Գրիգորիսի, Գրիգոր վարդապետի եւ Համազասպ առաջնորդի ժամանակագրութեամբ, որոնք գործել են 12-րդ դարի վերջին եւ 13-ի սկզբներին⁵⁷: Անուանի հայագէտի միւս եզրայանգմամբ Կեչառիսի եւ Հաւուց Թառի Տիկնացտիկները նոյն անձն են⁵⁸: Այս պարագայում միանգամայն հաւաստի է թուում Հաւուց Թառի վիմագրերում երկիցս յիշատակուած Կուկորի նոյնացումը Տիկնացտիկնոջ որդի Կուկորի հետ, ինչը Գ. Յովսէփեանը հաւանական է համարում⁵⁹:

ԱՆԱՐԺԱՆ ԾԱՌԱ ԱԷՆԱՓՐԿՉԻՆ Կուկորը Հաւուց Թառի վանքին է նուիրում իր ՏՈՒՆՆ, ՋԱՅԳԻՆ, ՋՋԱՂԱՅՆ ԵՒ :Բ: ԱՂԲԻՆ եւ պատարագներ ստացել իր, ծնողների եւ կնոջ՝ Մահանի բարեխօսութեան համար⁶⁰:

Կուկորը թաղուած է Բլրի եկեղեցու հս-ամ անկիւնում: Տապանաքարին փորագրուած է. ԹՎ. ՈՂԵ /1246/ /ՓՈՒՆԵՑԱԻ / ՊԱՐՈՆ ԿՈՒԿՈՐԻՆ Ի ՔՍ ՅԻԾԵՑԷՔ ՅԱՂԱԻԹՍ ՁԵՐ՝: Այս տապանագրի կապակցութեամբ Գ. Յովսէփեանը գտնում է, որ՝ ««Պարոն» տիտղոսը ժԳ դարում նորա իշխանական ծագումն է հաստատում, որոշել չենք կարող որ տոհմից, բայց, հաւանօրէն, Պահլաւունեաց մի ճիւղի, որոնց սեպհականութիւնն էր այս վանքը...»⁶²:

Վերը բերուած վիմագրական վկայութիւնների շնորհիւ ուրուագծուած է Տիկնացտիկնոջ մերձաւոր հարազատների տոհմածառը.

ԳՐԻԳՈՐ+ՄԱՄԻԿ
 ՍԱՐԳԻՍ+ԱՄԵՆՏԻԿԻՆ
 ՄԽԻԹԱՐԻԶ+ՏԻԿԵԱՅՏԻԿԻՆ
 ԿՈՒԿՈՐ+ՄԱՀԱՆ

18 Բլրի եկեղեցի, հս պատին, արտաքուստ, 4 տող.

ԸՆՈՂՆԻՆ ԱՅ, ԵՄՍ ՍՏԷՓԱՆՈՍ ՅՈՂԱՆԻՍԵԱՆՅ ԵՏՈՒ ԶԵՐԿՈՒ ՀՈՂՆ Ի ՎԱՍՆ ԶՎԱՐԴԵՆՅ ԵՒ ԱԻՋԱԿԵՆՅ ԵՒ ԱՅԼ ԱՐԴԻՒՆՍ Ի ՍԲ ՈՒՆՏՍ ԵՒ ՄԻԱԲԱՆՔՍ ԵՏՈՒՆ ՄԵՋ :Գ: ԺԱՄ ԱՄԵՆ ԱՄԻ, ՄԻՆ ԻՆՁ ՄԻՆ ԿԱՐԱՊԷՏԻՆ ՄԻՆ ՄԽԻԹԱՐԱ, ՈՎ / ԶՀՈՂԵՐՆ Ի ՅԵԿԵՂԵՑՈՅՍ ՀԱՆԷ ԴԱՏԻ ՅԱՅ:

Ծանօթ. Գ. Յովսէփեանը նուիրատուի անունից յետոյ վերծանել է. ԵՏՈՒ ԶԿԵՐ... /?/ ՀՈԳՆԵՎԱՆՍ /?/ ԶՎԱՐՆԵՆՅ /?/ ԵՒ ԱՅԿԵՆՅ /?/, իսկ արձանագրութիւնն աւարտել է ԻՆՁ բառով⁶³: Նոյն Ստեփանոսը մի նուիրագիր է թողել Գառնիի Սոնպենց Ս. Աստուածածին վանքի գերեզմանատան մատուռի հիւսիսային պատին. ՅՈՒՍՈՎ ԲԱՐԵՐԱՐԻՆ ԱՅ, ԵՍ ՍՏԵՓԱՆՈՍ / ՅՈՂԱՆԻՍԵԱՆՅ ԵՏՈՒ :Գ: ԱԻՐ ԶԱՂԱՅ Ի ՍԲ / ԱԾԱԾԻՆՍ...⁶⁴: Այս վկայագիրը մասն է կազմում չորս վաւերագրերից բաղկացած ընդարձակ արձանագրութեան, որոնցից առաջինը թուագրուած է 1317 թ.: Յենուելով այս փաստին՝ Գ. Յովսէփեանը նոյն ժամանակով է թուագրում Ստեփանոս Յովհաննիսեանցի Հաւուց Թառի եւ Գառնիի արձանագրութիւնները⁶⁵:

19 Բլրի եկեղեցի. ներքուստ, հւ-ամ աւանդական մուտքի վերեւում, 6 տող.

ԱՆՈՒԱՄԲ ՅԻՍՈՒՍԻ(Ի), ԵՄՎԱՐԴՍ ԵՊԱՍՏ ԵՂԵ ԾԻՆՈՒԹԵԱՆ ԷԿԵՂԵՑՈՅՍ ՅԻՄ ԱՐԴԱՐ ՎԱՍՏԱԿՈՅ: ԵՒ ՍՊԱՍԱՒՈՐՔ ՍԲ ՈՒՆՏԻՍ ՍԱՀՄԱՆԵՑԻՆ :Բ: / ԱԻՐ ԺԱՄ Ի ՏԱ-

ՐՈՋՆ ՏՈՒՆԻ :ԽԻՑՆ (Քառասնիցն - Գ. Ս.) :Ա: ԻՆՁ :Ա: / ԱՄՈՒՍՆՈՅՆ ԻՄ ԹԻԿԱ: ԽԱՓԱՆԻԶՔՆ ՊԱՏԺԵԱՅ/ԻՆ ԵՒ ԿԱՏԱՐԻԶՔՆ ԱԻՐՀՆԵԱԼ ՅԱՅ:

Հրատ. 39, Հաւուց Թառ, 27

Ծանօթ. Վ. Մ. Սիսուեի վերծանութիւնը սխալաշատ է եւ պակասաւոր: Մեր կողմից ճշգրտուող հատուածը այստեղ վերծանուած է հետեւեալ կերպ. ԱՆՈՒԱՄԲ ՅԻՍՈՒՍԻ ԵՍ ՀՆԱՐԴՍ ԵՊԱՍՏ ԵՂԷ ԾԻՆՈՒԹԵԱՆ ԵԿԵՂԵՑՈՅՍ...⁶⁶: Վերծանութեան մէջ բացակայում է նաեւ Վարդի կնոջ՝ Թիսիի անունը:

Նոյն հատուածը Գ. Յովսէփեանը վերծանել է. ԱԲ ՅԻԻ ԵՍ ՎԱՐԴԱՆ ՊԱՍՏԵՂԱՌՆՈՒԹԵ /?/ ԷԿԵՂԵՑՈՅՍ...⁶⁷: Եթէ առաջին ղէպըում սխալ է վերծանուել միայն նպաստաւորողի անունը՝ Հնարդ, ապա երկրորդում Վարդ անձնանունն Ս յօդատառը կարդացուել է Ա, ինչի շնորհիւ անունը յաջորդ՝ ԵՊԱՍՏ բառի ն-ի կցմամբ վերծանուել է Վարդան: Յաջորդ հատուածը առանց ն տառի զրկում է իմաստից, ուստի պատահական չէ, որ անձնանունը հետեւել է ՊԱՍՏԵՂԱՌՆՈՒԹԵ անհասկանալի տառակապակցութիւնը⁶⁸:

Արձանագրութեան շինարարական բնոյթը հնար է տալիս այն թուագրելու 13-րդ դարի 10-ական թթ.: Հնարաւոր է, որ Վարդը նպաստաւորել է եկեղեցու հէնց հարաւարեւմտեան աւանդատան կառուցումը:

Յուշարձանախմբի աւերակների մէջ առկայ են բազմաթիւ արձանագրուած շինաքարեր, որոնց վկայագրերը տեղ կը գտնեն «Դիւան հայ վիմագրութեան» համապատասխան պրակում:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- 1 Սիմէօն Երեւանցի, *Ջամբո*, Վաղարշապատ, 1873, էջ 275-280:
- 2 Հ. Ղեւոնդ Ալիշան, *Այրարատ*, Վեներտիկ, 1890, էջ
- 3 *Материалы по археологии Кавказа*, вып. XIII, М., 1916, с. 38-50.
- 4 Գ. Յովսէփեան, *Հատուց Թառի Ամենափրկիչը եւ Առնանուն յուշարձաններ հայ արուեստի մէջ*, Երուսաղէմ, 1937, Յառաջաբան:
- 5 Նոյն տեղում:
- 6 Նոյն տեղում, էջ 12բ:
- 7 Նոյն տեղում, էջ 11բ: Քիչ անց Գ. Յովսէփեանը, քննելով եկեղեցու արեւմտեան պատի միւս արձանագրութիւնները եւ դրանցում յիշուած անձանց ժամանակագրութիւնը, գրում է. «Այս բոլոր հանգամանքները ի մի կշռած, կարծում եմք, որ եկեղեցին շինուած է ԺԳ դարի առաջին քառորդին» (նոյն 14), աւելացնելով, որ այս կարծիքին համամիտ է նաեւ Թ. Թորամանեանը:
- 8 Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ. Ե-ԺԲ դդ., աշխատասիրութեամբ Ա. Ս. Մաթեոսեանի, Եր., 1988, էջ 264.
- 9 Գ. Յովսէփեան, *Հատուց Թառի Ամենափրկիչը...*, էջ 17:
- 10 Գ. Յովսէփեան, *Խաղբակեանք կամ Պոռչեանք Հայոց պատմութեան մէջ*, հտ. Գ, Նիւ-Եօրք, 1942/3, էջ 44:
- 11 Գ. Յովսէփեան, *Խաղբակեանք կամ Պոռչեանք Հայոց պատմութեան մէջ*, հտ. Ա, Էջմիածին, 1928, էջ 65:
- 12 Ashkharbek Kalantar. *The Mediaeval Inscriptions of Vanstan. Armenia*, Paris, 1999. p. 23.
- 13 Գր. Ս. Գրիգորեան, *Սիւնիքի վանական կալուածատիրութիւնը IX-XIII դարերում*, Եր., 1973, էջ 162:
- 14 Նոյն տեղում, էջ 163:
- 15 1261 թ. մի յիշատակարանում ձեռագրի պատրաստման օժանդակողների թումնը նշուած է նաեւ վանքի տնտեսը (Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ ԺԳ դար, կազմեց Ա. Ս. Մաթեոսեան, Եր., 1984, էջ 305):
- 16 Հ. Աճառեան, *Հայոց անձնանունների բառարան*, հտ. Բ, Եր., 1944, էջ 429:
- 17 Գ. Յովսէփեան, *Խաղբակեանք...*, հտ. Գ, էջ 9:
- 18 Մանուկի, *Այրի վանք կամ Գեղարդայ վանք*, Վաղարշապատ, 1871, էջ 50:
- 19 Հ. Ղ. Ալիշան, *Այրարատ*, Վեներտիկ, 1890, էջ 355:
- 20 Թ. Աղայեկեան, *Հայագիտական հետազոտութիւններ*, Եր., 1969, էջ 317:

- 21 Գ. Յովսէփեան, *Հատուց Թառի Ամենափրկիչը...*, էջ 23:
- 22 Ս. Աւագեան, *Վիմակաւ արձանագրութիւնների բառարանութիւն*, Եր., 1978, էջ 314:
- 23 Նոյն տեղում:
- 24 Գ. Յովսէփեան, *Հատուց Թառի Ամենափրկիչը...*, էջ 25:
- 25 Թովմա Մեծփեցի, *Պատմագրութիւն, աշխատասիրութեամբ Լ. Խաչիկեանի*, Եր., 1999, էջ 219:
- 26 Գ. Յովսէփեան, *Հատուց Թառի Ամենափրկիչը...*, էջ 30, Մ. Օրմանեան, *Ազգայապատում*, հտ. 2, Կ. Պոլիս, 1927, էջ 2111:
- 27 Սիմէոն Երեւանցի, *Ջամբո*, էջ 276:
- 28 Նոյն տեղում, Ա. 277:
- 29 Գ. Յովսէփեան, *Հատուց Թառի Ամենափրկիչը...*, էջ 31:
- 30 ԺԵ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, մասն Ա (1401-1450 թթ.), կազմեց Լ. Ս. Խաչիկեան, Եր., 1955, էջ 304:
- 31 Մատենադարանի պարսկերէն կալուածագրերը, հտ. 1, կազմեց Յ. Փափագեան, Եր., 1968, էջ 82:
- 32 Նոյն տեղում, էջ 155:
- 33 Նոյն տեղում, էջ 156:
- 34 Գ. Յովսէփեանը Առնպէս այդ կարծիքի է (Հատուց Թառի Ամենափրկիչը, էջ 31):
- 35 Մատենադարանի պարսկերէն կալուածագրերը, հտ. 1 էջ 83:
- 36 Նոյն տեղում, էջ 27:
- 37 Նոյն տեղում, էջ 28-29:
- 38 Նոյն տեղում, էջ 85:
- 39 Նոյն տեղում, էջ 104:
- 40 Նոյն տեղում, էջ 166:
- 41 Նոյն տեղում, էջ 104:
- 42 Մատենադարանի պարսկերէն կալուածագրերը, հտ. 1, էջ
- 43 Գ. Յովսէփեան, *Հատուց Թառի Ամենափրկիչը...*, էջ 31:
- 44 *Ջաքարիայ Սարկաւազի Պատմագրութիւն*, հ. Ա, Վաղարշապատ, 1870, էջ 56:
- 45 Սիմէոն Երեւանցի, *Ջամբո*, էջ 278:
- 46 Նոյն տեղում, էջ 279:
- 47 Նոյն տեղում, էջ 279-280:
- 48 Գ. Յովսէփեան, *Հատուց Թառի Ամենափրկիչը...*, էջ 33:
- 49 Նոյն տեղում:
- 50 ԺԵ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, մասն երկրորդ, (1451-1480 թթ.) կազմեց Լ. Ս. Խաչիկեան, Եր., 1958, էջ 214:

- 51 Գ. Յովսէփեան, *Հատուց Թառի Ամենափրկիչը...*, էջ 24:
- 52 Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, ԺԳ դար, էջ 796:
- 53 ԺԵ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, մասն երկրորդ, էջ 214:
- 54 Գ. Յովսէփեան, *Հատուց Թառի Ամենափրկիչը...*, էջ 23:
- 55 Գ. Յովսէփեան, *Խաղբակեանք...*, հտ. 3, էջ 32-33:
- 56 Գ. Յովսէփեան, *Հատուց Թառի Ամենափրկիչը...*, էջ 23:
- 57 Նոյն տեղում:
- 58 Նոյն տեղում:
- 59 Նոյն տեղում:
- 60 Նոյն տեղում:
- 61 Գ. Յովսէփեան, *Հատուց Թառի Ամենափրկիչը...*, էջ 12:
- 62 Նոյն տեղում:
- 63 Նոյն տեղում, էջ 25:
- 64 Լ. Պետրոսեան, *Գառնի IX-XIV դարերում*, Եր., 1988, էջ 105-106:
- 65 Գ. Յովսէփեան, *Հատուց Թառի Ամենափրկիչը...*, էջ 25:
- 66 *Материалы по археологии Кавказа*, вып. XIII, с. 39.
- 67 Գ. Յովսէփեան, *Հատուց Թառի Ամենափրկիչը...*, էջ 27:
- 68 Ծանօթութեան մէջ Գ. Յովսէփեանը գրում է. «Այս արձանագրութեան կցուածքները ճշդութեամբ չեն պահուել. մութն ընկնելու պատճառով միայն կարդացուած են» (*Հատուց Թառի Ամենափրկիչը...*, էջ 27): Կարծում ենք, որ միայն այս հանգամանքով կարելի է պայմանաւորել մեծ հայագետի եւ վիմագրագետի այս վրիպումները:

UN PSAUTIER ARMÉNIEN ILLUSTRÉ DU XV^e SIÈCLE¹

Edda Vardanyan

Le Psautier est le livre rituel le plus important et le plus fréquemment utilisé du Moyen Age, tant dans l'ordinaire ecclésiastique que dans l'usage individuel². A Byzance, où le Psautier était l'un des livres les plus abondamment illustrés, il y avait deux manières d'illustration : en pleine page et dans les marges³. Dans les Psautiers aux illustrations marginales, les représentations sont plus proches du texte et bien plus vivantes, mais par contre, les Psautiers à composition symétrique des pages ont une orientation rituelle symboliste⁴.

Les illustrations sont rares dans les Psautiers arméniens. Les enlumineurs se limitent souvent à représenter le portrait du roi David, auteur de psaumes. Les Psautiers illustrés sont plus nombreux parmi les manuscrits de la basse période. Le plus ancien Psautier arménien connu à illustration en pleine page est un manuscrit du XV^e siècle⁵, étudié par S. Der Nersessian et conventionnellement nommé "Psautier de Ségrédakis"⁶. Il est enluminé de portraits pleine page de prophètes et de l'illustration des cantiques⁷.

Le Psautier-Missel (*Սաղմոսարան, Աղօթագիրք*) enluminé par le peintre Minas en 1458 au Vaspourakan (Maténadaran d'Erévan 10441)⁸, fait l'objet de cet article. Le choix des sujets et la manière d'illustration du manuscrit de Minas reprennent le schéma d'enluminure en pleine page du Psautier de Ségrédakis et des Psautiers byzantins.

* * *

Le manuscrit comporte 353 folios, (10,9 x 7,8), il est écrit sur papier en *bolorgir*. Le

texte est disposé sur une seule colonne et chaque page comporte 19 lignes. Le Psautier est copié par le scribe Ignatios, sur la commande du *vardapet* Zak'aria. Il est enluminé par le peintre Minas.

Le manuscrit provient du monastère de Xarabastavank' (nommé aussi Suxaravank') dans le canton de Kajberunik⁹. Aux XIV^e-XV^e siècles, c'est un important centre scolaire et scientifique¹⁰. En 1389, sous le pontificat de l'évêque Zak'ëos, le *vardapet* Sargis Aprakunec'i, élève d'Esayi Nč'ec'i, y fait un séjour et le monastère se transforme en "essaim de science"¹¹. Aprakunec'i se transporte de Tat'ew à Suxaravank' dans le but d'y fonder une école de *vardapets* et de la diriger. L'une des raisons de son séjour est aussi la lutte contre les uniates catholiques¹². Parmi les quelque soixante élèves qui l'entourent, se trouvent T'ovma Mecop'ec'i, Grigor Xlat'ec'i et bien d'autres.

Sous la prélatrice d'Aprakunec'i (1389-1401), le monastère progresse et, comme le dit H. Ačaryan, "il éclaire de ses lumières les rivages du Vaspourakan"¹³. Après le décès du maître en 1401, celui-ci est remplacé par le *vardapet* Vardan Hogoc'vanec'i. L'école fondée par le *vardapet* Sargis fonctionne pendant quarante ans environ; elle est considérée comme la jumelle de l'école de Tat'ew et l'une des meilleures écoles supérieures médiévales d'Arménie¹⁴. L'apogée de l'art du livre est le XV^e siècle¹⁵.

Le scribe de notre Psautier, Ignatios, est moine à Suxaravank' où il travaille entre 1439-1468. Dans les manuscrits il est souvent